Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2001 թ.
դեկտեմբերի 10-ի N 861
որոշման

Ձև N 1

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր



Ձև N 2

ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Ձև N 3

ՀՈՒՇԱՄԵԴԱԼ

Հուշամեդալը պատրաստվում է արույրի համաձուլվածքից, որակը՝ պրուֆ, տրամագիծը 38 մմ է, քաշը՝ 20 գրամ, ոսկեզօծ՝ 999.9 հարգի: Հուշամեդալը շրջանաձև է, կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության կառավարության շենքի ռելիեֆային պատկերը, որի վերին մասում կիսաշրջանաձև տառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ», իսկ ներքևում՝ «ՎԱՐՉԱՊԵՏ» բառերը: Հուշամեդալը եզրագծված է ցորենի հասկ հիշեցնող նախշերով:

Հուշամեդալն ունի եռագույն ժապավեն, դարձերեսի կողմից համարակալվում է և ունի ամրացնելու հարմարանք:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2001 թ.
դեկտեմբերի 10-ի N 861
որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետը շնորհակալագրով, հուշամեդալով, արժեքավոր նվերով, ինչպես նաև դրամական պարգևով պարգևատրում է մշակույթի, արվեստի, գրականության, կրթության, գիտության, տնտեսության, առողջապահության, պետական և հասարակական-քաղաքական գործունեության, սպորտի և այլ բնագավառներում Հայաստանի Հանրապետությանը մատուցած նշանակալի ծառայությունների, բարեգործական գործունեության, ինչպես նաև երկարամյա օրինակելի ու անբասիր աշխատանքի համար:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետը պարգևատրում է նաև զենքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետին պարգևատրման միջնորդություն կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինները (նախարարություններին ենթակա մարմինները՝ համապատասխան նախարարության միջոցով) և Երևանի քաղաքապետը:

4. Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է պարգևատրել անձնական նախաձեռնությամբ:

5. Հայաստանի Հանրապետության վարչապետի պարգևատրմանը կարող են ներկայացվել, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ՝ օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք, կազմակերպություններ ու կոլեկտիվներ:

6. Միջնորդության հետ միասին Հայաստանի Հանրապետության վարչապետին են ներկայացվում պարգևատրման ներկայացվող անձի կենսագրական տվյալները, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և բնութագիրը՝ դրանում ներառելով առանձին բնագավառներում մատուցած ծառայությունները և ունեցած վաստակը:

7. Հայաստանի Հանրապետության վարչապետի պարգևատրմանը ներկայացված անձանց վերաբերյալ միջնորդությունները քննարկելիս՝ համապատասխան մարմիններից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ:

8. Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է վերանայել պարգևատրման տեսակը կամ մերժել միջնորդությունը:

9. Հայաստանի Հանրապետության վարչապետի շնորհակալագիրը, հուշամեդալը, արժեքավոր նվերը, զենքը, դրամական պարգևը հանձնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ, նրա հանձնարարությամբ (կամ համաձայնությամբ), համապատասխան պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարը կամ այլ պաշտոնատար անձ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ